

5766

551493

S 37

2010

SW 2002

11342
ՆԻԿՈԳԵՅՈՍ ՏԵՐ-ԱՆՆՏԻՔԵԱՆ

51.493(47.9)
S-37

(189)

ՎՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՆՔԱՅԻՆ ԶՐԵՐ

Արամշատան, Բորժոմ, Պետրիգորսկ, Շիրակցի, Էսենաուի,
Կիսլովոյսկ, Տիֆլիս:



30

0-85

Թ Ի Փ Լ Ի Ս

Տպարան Ս. Շարաձե. || Тип. М. Шарадзе.

1893

Յրդ. ԼՍ. Մի Կ Բ. Եղեբազյան
Եւն ԷՍ

ՆԻԿՈԼԱՅՈՍ ՏԵՐ-ԱՆԵՏԻՔԵԱՆ

630
130-ՏԷ

551-493

Տ-378



ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՆՔԱՅԻՆ ԶՐԵՐ

Արա սթոռան, Բորժոմ, Պեառիչորսկ, Օւկրաինայի, Եսենաուկ, Կիւյուկովսկ, Թիֆլիս:



Թ Ի Փ Լ Ի Ս

Տպարան Մ. Շարաձէ || Тип. М. Шарадзе.
1893

15242

003
52-081

Дозволено цензурою. Тифлисъ, 15-го Марта, 1893 г.

10851

Ա.

ԱՅԱՍԹՈՒՄԱՆ.



Ուրիշ ասան իր տիտանական լեռնային կուտակու-
թիւններով բնական ամեն յարմարութիւն-
ներ ունի բազմօրինակ հանքային ջրեր
արտադրելու. հանքային ջրերով օգտու-
լը, որ առիթ է տալիս անծանօթ վայրե-
րով ճանապարհորդել՝ համարուած է բը-
ժշկութեան և առողջապահութեան մէջ
մի նշանաւոր միջոց: Ռուսաստանում շատերը, մանա-
ւանդ ամենաճոխ հարուստներն և բարձր ազնուական
դասակարգը, դեռ շարունակում են գնալ արտասահմանի
հանքային ջրերը. դրա մի դիտաւոր պատճառն այն է, որ
մեր հանքաջրային բուժարանները բարեշինուած չեն և դեռ
շատ հեռի են արտասահմանի կատարելագործութիւններից.
Թէպէտ մեր հանքային ջրերը շատ ջաւելի բազմաոգեսակ և
ընտիր են: Սակայն նրանց մեծ մասը անյայտութեան մէջ՝
յուժպետս կորչում է. իսկ ծանօթներից շատ շատերը չու-
նին բնակարանի, ապրուստի և լոգարանի յարմարութիւններ.
մինչդեռ արտասահմանի ամենաչնչին հանքային ջրի վրայ
իսկ կան կառուցուած ճոխ և բազմաթիւ հիւրանոցներ, ծա-

ռաստաններ, լողարաններ, զբօսատեղիներ և այլն. բայց դրանից եւրոպացիները անդադրում բոլոր տարին յայտարարում են իրենց ջրերի մասին ամեն ազգի լրագրներում և գրաւում են յոգնաթիւ այցելուներ. մի խօսքով մեր Հանքային ջրերը դեռ խանձարուրքի մէջ են...

Կովկասի բնական բուժարաններից մէկն է Աբասթուամանը, որին փառաւոր տպագայ է սպասում:

Աբասթուամանը գտնուում է Թիֆլիսի նահանգի, Ախալցխայի գաւառում, սոյն քաղաքից 25 վերստ, իսկ Թիֆլիսից 200 վերստ հեռաւորութեամբ, 4260 ոտնաչափ բարձրութեան վրայ:

Աբասթուամանն իր բուժիչ ջրերով յայտնի էր շատ հին ժամանակներում. պատմագիրներն լիջում են, որ վրաց թագաւորներն գնում էին Աբասթուամանի Հանքային ջրերից օգտուելու: 1829 թուին Աբասթուամանը ազատուեց Տաճկաց բռնակալութիւնից և մտաւ ռուսաց տիրապետութեան տակ: Ռուս բժիշկները նկատեցին, որ Աբասթուամանում ջերմախտով հիւանդները շուտով բժշկւում են: Շնորհիւ այնտեղի լեռնային մաքուր կլիմայի, եղևնեայ մայրիների ամբողջական բուժմունքի, տալիացածները կազդուրւում են և նոր զօրութիւն ստանում, իսկ նրա Հանքային ջրում լողացողները բուժւում են յօդացաւից և այլն: Ուստի 1865 թուին հիմնուեց այստեղ զինուորական բուժարան, որով և սկիզբն դրուեցաւ այժմու նրա համեմատական բարեշինութեան: Աբասթուամանի գլխաւոր թերութիւնը մնում է նրա բնակարանների ըզրգալի պակասութիւնը և վերին աստիճանի թանգութիւնը:

1869 թուին Մեծ Իշխան Միքայէլ Նիկօլաւելի հրամանով բժշկապետ Ա. Բեմերթ գնաց Աբասթուաման, ուսումնասիրեց նրան և կազմեց ընդարձակ ծրագիր նրա բարեշինութեան. այդ ծրագրի մեծ մասը կառավարութեան առատ ձեռքով բաց թողած դրամների շնորհիւ Բեմերթն ինքն իր սպորձեց իրեն յատուկ եռանդով և տաղանդով. օրինակ

նրա կառուցած լողարանների շինութիւնը Աբասթուամանի Հանքային ջրերի վրայ իրենց կատարելագոյն յարմարութիւններով գերազանցում են նոյն իսկ Եւրոպայի նմանօրինակ հաստատութիւններից:

Կառավարութեան կողմից Աբասթուամանը բարեկարգելու համար ծախսուած է կէս միլիօն. նրա լողարանների փառաւոր շինութիւնը մի երկու ամսուայ ընթացքում կարող է 30 հազար վաննա մատակարարել:

Աբասթուամանը մի սքանչելի ձոր է հարաւից դէպի հիւսիս ընկած տասն վերստ երկարութեամբ: Զորի վերին ծայրը փակւում է Զեկարի լեռնային կապանքով, որի կատարից հիասքանչ և փառահեղ տեսարան է բացուում դէպի Վրաստան, Սև ծով և Կովկասեան գլխաւոր լեռնաշղթան:

Զորը պարփակող լեռները ծածկուած են մեծ մասամբ եղևնի և այլ սաղարթախիտ հոծ անտառներով: Լուսնի լուսով այս կանաչազարդ ծորձորները դիւթիչ տպաւորութիւն են գործում. այս տեղի բնութեան ակնապարար գեղեցկութիւնը հազուադէպ է:

Աբասթուամանի Հանքային աղբիւրի գլխաւոր աղի ջրերը Բէօմիւրի 40 աստիճան տաքութիւն ունի և ըստ երևոյթին դուրս է գալիս 3500 ոտնաչափ խորութիւնից. յայտնի է, որ իւրաքանչիւր 100 ոտնաչափ խորութիւն մի աստիճան աւելացնում է ջրի ջերմութիւնը:

Աբասթուամանի տաք ջրերը թոյլ են մինեւրեւական բաղադրութեան կողմից. ջրի 10,000 մասում միայն 5¹/₂ գրամ հանք է հաշւում. նրա մէջ բարունակուած գազերն են՝ ազոտ, ածխածին թու և ծծմբային ջրածին. այս հանգամանքն ապացոյց է, որ ջուրն անցնում է երկրի այնպիսի շերտերից, որոնք զանգուած են կենդանային և բուսային մնացորդներով:

Հանքային աղբիւրների երկու գլխաւոր աղբիւր ջուրը հաւաքւում է մի մեծ բետօնից շինած ջրամբարի մէջ, որ

բովանդակում է 4740 դոյլ (վեդրո) ջուր: Խողովակների բազմաթիվ ցանցերով հանքային ջուրը գնում է լողարանների շինութիւնը, ուր երկու ընդհանուր կարելի է ցանկացած աստիճանի տաքութեան վաննա պատրաստել: Հասարակ պաղ ջրի հոսանքները բերուած են այդ շինութեան մէջ:

Լողարանների գլխաւոր շէնքի երկարութիւնն է 40 սաժէն. դրսից հասարակ ձև ունի. իսկ ներսը բարեկարգուած է շատ ճոխութեամբ. շինութեան ճակատին կայ ժամացուցաւոր մի աշտարակ. շէնքի մէջ տեղը կայ մի ընդարձակ դահլիճ, որ լոյսն ընդունում է վերեւից՝ ապակաւոր դմբութից. այդ սրահը հասարակաց ընթերցարանն է և լողացողների հերթի սպասելու տեղը: Կան այստեղ նմանապէս շոգիով և ցնցուղով օգտուելու սենեակներ. մի խօսքով Աւթաթումանում ջրաբուժութիւնը կարող է գործ դնել ամենաընդարձակ չափով. վաննաներն թւով 40՝ շինուած են մարմարիօնից: Լողարանների գլխաւոր շէնքի առաջ սփռուած է նորատունկ ծառաստան և ծաղկանոց՝ բարձր խփող շատրուանով: Ծառաստանի մի կողմից չորս սաժէն բարձրութիւնից թափուում է մի հիւսնալի ջրվէժ, որի վրայօք մի գեղեցիկ կամուրջ է ձգուած Բեմերթի լիշատակին:

Եղած դիտողութիւններից երևում է, որ Աւթաթումանում օդի ջերմութիւնը Բէօմիւրի 24 աստիճանից չի անցնում. երեկոները, առաւօտները և գիշերները կենսապարար զով է լինում 14 աստիճանից ոչ ցած:

Եղանակը.— պարզ՝ օրերի թիւը տարուայ ընթացքում այստեղ լինում է 120, ամպամած օրերը 80, անձրև, ձիւն և այլն 134 օր: Ամենից շատ պարզ օրեր լինում են աշնանը, որ և լիբաւի տարուայ ամենագրաւիչ եղանակն է այստեղ. անձրևաշատ ամիսներն են մայիս (19 օր), յունիս (15 օր), և յուլիս (14 օր):

Ամառուայ տաքութեան միջին աստիճանն է $14\frac{1}{2}$. աշ-

նանը 8 աստիճան, ձմեռը 4 աստիճան զրօից ցած, գարնանը 6 աստիճան:

Աւթաթումանի գետինը աւազոտ, քռէջոտ է. ուստի այստեղ չըկայ խոնաւութիւն, փոշի, ցեխ, բազմաթիւ են սառնորակ, վճիտ, մարսեցուցիչ աղբիւրների ջրեր. այստեղ մարդու հոգեկան տրամադրութիւնը զուարթանում է, ախորժակը բացւում, քունը խոր, մարսողութիւնը կանոնաւորւում է և այլն:

Աւթաթուման կարելի է գնալ որպէս մի առաջնակարգ ամարանոց հանգչելու, ոյժերը կազդուրելու և շոգ վայրերից այստեղ ապաստարան գտնելու համար:

Աւթաթուման ղրկում են կրճաքացաւ կամ թոքախտ ունեցողներին, որոնք օգտուում են այստեղի եղանակների բուժմունքով լի, լեռնային, անփոշի, ոչ խոնաւ, ոչ չոր և բաւական միակերպ եղանակից և օդից:

Աւթաթուման գնում են հանքային ջերմուկներից օգտուելու համար յոգացաւ, կաշու և այլ նմանօրինակ հիւանդութիւններ ունեցողները:



Բ.

Բ Ո Ր Ժ Ո Մ.



ին Հայաստանի Տալք կամ Տալոց աշխարհ կոչ-
ւում էր այժմու Ախալցխայի գաւառը իր շրջ-
ջակայ մի քանի վայրերով: Տասներեքերորդ
դարում այդ նահանգն ընկաւ Վրաց տիրա-
պետութեան տակ և հռչակաւոր Թամարա
թագուհին նորոգելով Տալքի հին բերդը,
նրան Ախալ-ցիխէ անուանեց, որ թարգմանւում է Նոր-ամրոց:

Տասնվեցերորդ դարու սկզբից տաճիկները իշխեցին այս
երկրին, թէպէտ մի առ ժամանակ պարսիկներն էլ տիրա-
պետեցին այս կողմերին, սակայն տաճիկները դարձեալ միաց-
րին նահանգն իրենց պետութեան հետ, մինչև որ 1828 թուին
ռուսներն ազատեցին հին Տալքը մահմետական բռնակալու-
թիւնից:

Բորժոմ իսկապէս հին ժամանակը կոչւում էր մի պա-
հականոց-աշտարակ, որին մի քանի տեղի հայեր դիտւան են
ասում. իսկ նրա հանքային ջրերի մասին պատմական ոչ մի
տեղեկութիւն չըկայ թէ յայտնի եղած լինէին և կամ դորժ
ածուէին ինչպէս բուժիչ միջոց. թէպէտ շատ կանգուն կամ
կիսակեր յիշատակարաններ կան՝ վանքեր, բերդեր, որոնք ցոյց

են տալիս, որ Բորժոմի շրջակաները խիտ քրիստոնեայ ազ-
գաբնակութիւն է եղել:

Տալքն առաւելապէս անտառառոտ և լեռնոտ երկիր է.
այստեղ մի եօթանասուն վերստ տարածութեան վրայ գտնւում
են շատ հարուստ և առողջարար՝ մի քանի տեսակ հանքա-
յին ջրեր. Աբասթուման—ջերմուկներ, Ուրաւել—պաղ երկա-
թաջրեր և Բորժոմ—աղային ջրեր:

Կովկասի բոլոր հանքային ջրերը իրենց յայտնի դառ-
նալով և ծաղկելով պարտական են զինուորականներին.
այսպէս և Բորժոմի հանքային ջրերը և նրանց պիտանաւո-
րութիւնը ծանօթացրաւ կառավարութեանը 1837 թուին
Խերսոնեան գրեմադեր գունդը, որ բնակում էր այդ ժամա-
նակ Գորի և զինուորականները գտնելով այդ ջրերը մի խոր
փոսի մէջ մի մութ ծմակում՝ գնում էին այնտեղ նրանցից
օգտուելու: Այդպիսով ջրերը շուտով հռչակուեցան և ար-
դէն 1841 թուին Սնդրկովկասի կառավարչապետ Գօլովինը
հրաման տուաւ բարեշինել ջրերը նրանցից կանոնաւորապէս
օգտուելու համար: Զինուորները ճանապարհ բաց արին, Կուրի
վրայ կամուրջ շինեցին, վանանների ծածկ շինեցին և այլն:
Հանքային ջրերի մի աղբիւրը կոչուեց Գօլովինի գոտեր ա-
նունով՝ Եկատերինեան, երկրորդը Գօլովինի անունով կոչուեց
Եւգենեան:

Աշխարհաշէն Վօրօնցով փոխարքան վրաց իշխաններից
գնեց Բորժոմը և արքունի կալուածք դարձրեց. սրա օրով
Բորժոմը Հաստատուեց իր հռչակի մէջ և ծաղկեց. 1871
թուին Թագաւոր Կայսրը բարեհաճեց նուիրել Բորժոմը Կով-
կասի փոխարքայ մեծ իշխան Միքայէլ Նիկօլաեւէին, որպէս
մշտնջենական ժառանգական սեպհականութիւն: Կալուածքի
մեծութիւնն է 69,881 օրովար (գեսետին), որից 30,573-ը
ատարխճային անտառ է:

Բորժոմը խիտ անտառոտ և լեռնոտ տեղ է, ինչպէս ա-
սացինք, և համարեա շրջանաձև դիրք ունի: Բուն Բորժոմի

տեղը 2630 ոտնաչափ բարձրութիւն ունի, իսկ նրան շրջապատող լեռները հասնում են 5000-ից մինչև 8 և ավելի հազար ոտնաչափ բարձրութեան:

Այս կալուածքի միջով, բացի ուրիշ մի քանի գետակները, երեսուն վերստ տարածութեամբ անցնում է Կուր գետը, որի վրայով Թիֆլիս է ղրկւում ատախճ և վառելափայտ,

Բորժոմը որպէս կենսապարար ամարանոց և որպէս հանքային ջրերի բուժարան՝ կատարեալ աստիճանի բարեշինուած է. պակասութիւն չըկայ յարմարաւոր տների, ճանապարհների, գուարճութիւնների և այլն:

Բորժոմը երկաթուղու գծով միացած է Միխայլովօ կայարանում Անդրկովկասեան երկաթուղուն. Բորժոմի միջով խճուղի է անցնում գէպի Ախալցխայ, Սխալքալակ և Սբասթուման: Թիֆլիսից Բորժոմ 148 Կերստ է, Սխալցխայից 45 և Միխայլովօ կայարանից 27 վերստ:

Բուն այժմու Բորժոմի տեղը մի փոքրիկ լեռնապատ հարթավայր է, որի հարաւային կողմից մտնում էք մի ձոր, որտեղ գտնւում են հանքային ջրերը: Այստեղ կառուցուած է Մեծ իշխան Միքայէլ Նիկօլաեւչի գեղեցիկ պալատ-ամարանոցը, որ շրջապատուած է ճոխ բուսականութեամբ և սքանչելի ծառաստաններով, որտեղ արձան է կանգնեցրած Բորժոմի հիմնադիր Ն. Գօլովինին: Գետակների վրայ կամուրջներ և անտառի մէջ ուղիներ ու շաւիղներ են շինուած զբօսանքների համար: Սարերի ստորին լանջերի վրայ շինուած են ամարանոցները, մի փոքրիկ ռուսական զիւղ, հայոց և ռուսաց եկեղեցին: Հանքային ջրերի վրայ կառուցուած է հոյակապ լողարան վանաններով, գալլերէեա, պարահանդէսի դահլիճ և ընթերցարան:

Բորժոմի հանքային ջրերի բաղադրական մասերից նշանաւորն իր քանակութեամբ կազմում է ածխածին նատրը (10,000-ից 31, 16), որ և որոշում է այս ջրերի բնութիւնը և բժշկական արժէքը:

Այս ջրերը վճիտ են իսպառ, եռցնելիս պղտորւում են աղբիւրի ջուրը իր ակից ուժգին է խփում, այնպէս որ ջրից արտաշնչող գազերից ջուրը շարունակ եւման մէջ է. ջրի համը աղ-նատրային է և բաւական դուրեկան, շնորհիւ իր մէջ բարունակող մեծ քանակութեամբ ածխածին գազի: Ջրի ջերմութեան աստիճանն է 23 և 24 Բէօմիւրի: Բորժոմի հանքային ջրերը նմանապէս կոչւում են Կովկասեան վիշի, որին բաւական մօտ են իրենց բաղադրութեամբ. իսկական վիշին ածխածին նատր ունի 10,000-ից 50,29 և ջերմութիւն 33 Բէօմիւրի:

Բորժոմի հանքային ջրերից օգտւում են լողանալով և խմելով. այդ ջրերն ապաքինող ազդեցութիւն են գործում հետեւեալ հիւանդութիւնների վրայ. քրօնիական կատարրաւամօքսի. փայծաղի ախտ. լեարտի ախտ. մաղձի ախտ և գեղնացաւ. դրսի աղիքի ախտ — դիմօրօյ. միզապարուշտի կատար և աւազ. սերմնագործարանների ախտ:

Բորժոմը ինքը և իր շրջակաները Կովկասի բնութեան գեղեցիկութեան մի տիպարն է:



Գ.

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐ.



Երսկեան նահանգի՝ Պետաիգորսկի շրջանը՝ վստահաբար կարելի է ասել, որ եզակի մի վայր է երկրագնդիս վրայ, ուր համեմատաբար մի փոքր տարածութեան վրայ գտնուում են այնքան յոգնատեսակ և այնքան նշանաւոր առատաբուղիս հանքային ջրեր: 50 վերստ տեղի վրայ կան չորս կարգ ջրեր, որոնցից երեք կարգը ստորաբաժանուում են շատ տեսակների և բացի դրանից նրանք հոսում են գետերի նման առատութեամբ:

Կովկասեան հանքային ջրերն իրենց զարգացման աստիճանով դեռ շատ նոր են և մատաղ և չընայելով որ 60 տարուայ շրջանում պետութիւնը նրանց վրայ ծախսել է չորս միլիոնից աւելի, նրանք դեռ շատ մօտ չեն արտասահմանեան հանքային ջրերի բարեշինութեան:

Կովկասեան հանքային ջրերի չորս խումբը սրանք են. Ծծմբային ջերմուկներ, որոնք գտնուում են նոյն իսկ Պետ-

աիգորսկ քաղաքի մէջ և որոնք հրաշքներ են գործում սիֆիլիտիքական ախտերը բուժելու ժամանակ: Այս ջերմուկներն բղիւում են 20 ակից զանազան քանակութեամբ և ուրիշ բաղադրութեամբ ու ջերմութեամբ: Եսենտուկի—աղ-նատրային ջրեր՝ համանուն մեծ ռուս աւանում, դաշտի վրայ, 20 պաղ, աղ-նատրային զանազան աստիճանի ոյժ ունեցող ջրեր, որոնք ահագին օգնութիւն են անում կատարային հիւանդութիւններն ապաքինելու համար:

Ժելեզնօլօզսկ—լեռնոտ, անտառոտ, մօտը համանուն փոքրիկ ռուս աւան, 20 տեսակ ջերմ, երկաթային աղբիւրներ, որոնք մանաւանդ նպաստող են կանանցի հիւանդութիւններ բժշկելու համար:

Կիսլօլօզսկ—լեռնոտ, մի ծառաստան ձորակի մէջ, ածխաթթուային մի հսկայ—աղբիւր, որ 24 ժամուայ մէջ տալիս է 200,000 դոլլ պաղ, վճիտ ջուր, որ հոչակուած է Նարզան անունով և մեծ ազդեցութիւն է անում ջրային ոյժերը վերականգնելու և զանազան տկարութիւններից կադ-դուրուելու համար:

Ռուսաց կայսրն, Մեծն Պետրոս 1717 թուին այցելելով արտասահմանեան Կարլսբադի և Պիեմօնտի հանքային ջրերը, միտք լղացաւ որ իր հայրենիքումն էլ նմանօրինակ բուժարաններ հիմնէ. ուստի իր աւագ բժշկապետ Ժօբերին ուղարկեց դէպի Կովկաս ուսումնասիրելու այնտեղի հանքային ջրերը: Ժօբերը նկարագրեց այդ ջրերը և լիշում է իսկ Նարզանի մասին, որին սակայն ինքն անձամբ չէր տեսել. այն ժամանակները այժմու Պետաիգորսկի ջերմուկներից օգտուում էին կիրգիզները, կալմիկները և Կովկասեան լեռներում բնակուող այլ խաժամութները:

1773 թուին այս ջրերն այցելեց գիտնական Գիւլդենշտեդը, որի թողած նկարագրութիւնը համառօտ է և հարեանցօրէն. այդ ժամանակ ջերմուկները գտնուում էին կարգինական իշխան Թարխանօվների կալուածքում, որոնք

ռուսաց հպատակ էին համարուում, բայց գաղտնի թշնամական զմացմունքներ էին տածում դէպի տիրող պետութիւնը. ուստի Գիւլբենշտեդը ստիպուած էր պահանջող ձեւերով մեծ խմբի ուղեկցութեամբ կատարել իր ճանապարհորդութիւնը: Գիւլբենշտեդի այցելութիւնից յետոյ 1780 թուին ջերմուկներից չորս վերստ հեռու հիմնուեց ռազմագիտական նպատակով Կոնստանդինօպօրսկի ամրոցը, (որ այժմս չքայ, նրա տեղը հիմա մեծ ռուս աւան է հոյակապ եկեղեցիով):

1793 թուին այցելեց այս ջրերը գիտնական Պալլասը, որ աւելի մանրամասնօրէն նկարագրեց այս վայրերը, թեթեւ կերպով ծանօթացաւ ժելեզնօվօգսկի հետ, որ անանցանելի խիտ անտառներով ծածկուած էր: Պալլասն է նմանապէս, որ առաջին անգամ ստորագրեց Կիսլօվօգսկը — Նարզանը և առաջարկեց մօտակայ Օլխովկա և Բերեզովկա գետակների գէմը պատնէշ շինել, որ նրանց ընթացքն հեռանայ Նարզանից, վասն զի գարնան յորդորութեան ժամանակ նրանք իսպառ ողողում էին սքանչելի աղբիւրը: Պալլասն այս ջուրն յորջորջեց *աղբքսանդրեան*, սակայն այս անունը չըհաստատուեց ժողովրդի մէջ և նա այժմ էլ առաջուան պէս կոչւում է Նարզան, որ տեղական լեզուով նշանակում է *հսկայական ջուր կամ աղբիւր*:

Ի վերայ այսր ամենայնի այս կողմերի հանքային ջրերից օգտուելը շատ դժուարութիւններ ունէր լեռնային աւազակների ասպատակութիւնների երեսից. 1798 թուին սահմանապահ զենեքալ Մարկօվը մաքրեց երկիրը ելուզակներից և քշեց վայրագ լեռնականներին դէպի Կուբան. նա առաջինը եղաւ, որ ընտանիքով ամառն անցուց Նարզանի մօտ, որի յիշատակին կանգնեցրած խաչը կայ մինչև ցայսօր: 1793 թուին Նարզանի մօտ հիմնուեց ամրոց, որ կոչուեց Կիսլօվօգսկ (թթու ջուր):

Կովկասեան ջերմուկների բուժիչ ներգործութեան հըռօջակը սուելի և աւելի մեծանում էր. այդ հիման վրայ պե-

տական բժշկական խորհուրդը 1803 թուին մի մշտական բժիշկ նշանակեց այնտեղ, որ նրա հսկողութեամբ օգտուին հիւանդները:

1809 թուին Մոսկուայի բժիշկ Գաազը գալով ջրերը՝ մեծ ծառայութիւն արաւ նրանց զարգացման գործին. նա առաջին անգամ ուշադրութիւն դարձրաւ Եսենտուկի աղ-նատրային ջրերի վրայ և ժելեզնօվօգսկում գտաւ երկաթաջրերի մի քանի նոր աղբիւրներ:

Յիշածս ժամանակներում լողանում էին ուղղակի աղբիւրի մօտ փորած փոսերում. ոմանք միայն դնում էին սեպ-հական վաննաներ. եկուորների համար նմանապէս բնակարանների մեծ պակասութիւն էր զգացւում. այնպէս որ կառավարութիւնն ստիպել էր Աստրախանի կիրգիզներին ամառավարութիւնն ստիպել էր Աստրախանի կիրգիզներին մօտ: Ուստի միջոցներին հարկը վրան դնել ջերմուկների մօտ: Վասնորոյ 1812-ից սկսուած մասնաւոր մարդիկ սկսեցին տըներ կառուցանել վարձու տալու համար. մի և նոյն ժամանակ կառավարութիւնն սկսեց լողարանների փառաւոր շէն-նակ կառավարութիւնն սկսեց լողարանների փառաւոր շէն-քեր կառուցանել վաննաների համար: Գենեքալ Երմօլովն եղաւ այդ ջրերի ծաղկման պատճառներից մին, որ և շինեց ջերմուկների վրայ առաջին լողարանը, որ և ցարդ կոչւում է իր անունով: Երմօլովի ջանքով 1822 թուին բարձրագոյն հրաման եղաւ մի գիտակ անձն ուղարկել ջրերն ուսումնասիրելու համար ֆիզիկա-քիմիական կողմից. այդպիսին ուղարկուեց բժշկական-անգամալուծական ճեմարանի ուսուցչապետ Նելիւբինը, որի այցելութիւնն անհետեանք չանցաւ ջրերի համար, մասնաւոր Եսենտուկի համար: Նա Եսենտուկում և ժելեզնօվօգսկում գտած իր աղբիւրները նշանակեց թուահամարներով, ինչպէս որ շարունակուած է մինչև հիմա:

1826 թուին, երբ ջերմուկների կառավարին էր գենեքալ Էմանուիլը, երկու եղբայր ճարտարապետներ՝ Բերնարդացի ազգանունով՝ ուղարկուեցան, որ գլուխ բերեն ջրերի բարեշինութիւնը Բարձրագոյն հաստատուած ծրագրով և յա-

տակագծով: Շուտով ձեռնարկուեցան կառուցուիլ այժմու Նիկողայոսեան լողարանի շէնքը, զինուորականների կենտրոնական շէնքը, հիւրանոցը, գալլերէէեաները, ծառատանները, ծաղկանոցները և այլն: Նոյն գեներալ Եմանուէլի աշխատութեամբ 1830 թուի, մայիսի 14-ին ջերմուկների տեղը քաղաք վերակոչուեց Պետտիգորսկ անունով:

1837 թուին Նիկողայոս կայսրը այցելեց Կովկասեան Հանքային ջրերը և գանձարանից տարեկան 57,142 ռ. նըպաստ նշանակեց:

1846 թուին Կովկասեան Հանքային ջրերն անցան փոխարքայ Վորոնցովի կառավարութիւն տակ, որի ժամանակ ջրերն Հասան իրենց բարձրագոյն բարեշինութեան և ծաղկման աստիճանին: Նրա ժամանակ շինուեցան Միքայէլեան և Եղիսաբէթեան սրահները (գալլերէէեայ). որոշուեց կանոնաւոր երթևեկութիւն Պետտիգորսկի, Ժելեզնոօլոգսկի, Եսենտուկի և Կիսլովոդսկի մէջ: 1851-ին Հիմնարկուեցաւ Պետտիգորսկի այժմու կաթեղալ տաճարի հոյակապ և հսկայ շինութիւնը:

Վորոնցովի գլխաւոր աջակիցն էր ճարտարապետ Ուստոնը, որի սեսլահական տունն իսկ մինչև Հիմա Պետտիգորսկում աչքի է ընկնում իր ինքնօրինակ ոճով:

Վորոնցովի օրով շինուեցաւ Կիսլովոդսկի Հիանալի սրահը և տնկուեցաւ այժմու նրա հրաշալի ծառաստանը և կաղամախների դիւթիչ ճեմելիքը:

Շատ բարեշինութիւններ տեղի ունեցան նմանապէս Եսենտուկ և Ժելեզնոօլոգսկ: 1862 թուականներից ջրերը կապալով դրւում էին մասնաւոր մարդկանց կառավարչութեան. սակայն 1883 թուականից բարեբախտաբար պետական կալուածների նախարարութիւնը վերջ դրաւ կապալաւորութեան և ինքն է կառավարում ջրերը և յառաջ վարում նրա բարեշինութիւնը իր յատուկ գործակալի միջոցով, որ կօմիսար է կոչուում: 1876 թուին Ռոստովի Վլադիկովկասեան

երկաթուղին բացուեց, որի Միներալնի կայարանից Պետտիգորսկը հեռի էր միայն 20 վերստ, որ և ներկայումս միացւած է երկաթուղու գծով թէ գրաւ և թէ միւս ջրերի հետ:

Բոլոր չորս ջրերումն էլ, բացի բազմաթիւ մասնաւորները, կան կառավարութեան կողմից այցելուների համար շինած հիւրանոցներ, ճաշարաններ. բացի բազմաթիւ մասնաւոր բժիշկները կան կառավարչական բժիշկներ, բժշկական խորհուրդներ և այլ ամեն տեսակ յարմարութիւններ և հոգածութիւններ: Ամեն այցելու ազատ-համարձակ ելումուտքի իրաւունք ունի կառավարչական գործակալի մօտ:



Դ.

ՊԵԱՏԻԴՕՐՍԿ



աշուտկա սարի հարաւային ստորոտում գտնւում է Պետիգորսկ. քաղաքի արեւելեան կողմից անցնում է Պոզկու-մուկ գետը. քաղաքի առաջ դէպի հա-րաւ ընկած է մի հովիտ-դաշտ, որի միջով հոսում է լիշեալ գետը: Մա-շուտկա սարը ինքը թանձր կաւճային կազմուածք ունի և մեծ մասամբ անտառա-պատ է. նրանից բաժանւում է մի ուրիշ սա-րաւանգ, որ կոչւում է Ջերմուկ սար, որի կողերից բլիսում են հանքային տաք աղբիւրները. Ջերմուկ սարը իր ամբողջ երկա-րութեամբ ճեղքուած է երկու մասի ներքին գագերի ուժգնակի ներգործութիւնից. պատուածքի լայնութիւնը շատ տեղ սաժէնից աւել է: Ջերմուկ սարն ևս ամբողջապէս կազմուած է շերտ-շերտ կաւճային պնդութիւնից: Եթէ մի փայտի կը-տոր ձգէք ջերմուկների աւազանի մէջ, նա մի քանի օրից յետոյ ծածկւում է կաւճային շերտով. փոքրիկ ձողեր, կամ ճիւղտներից հիւսած սիւներ գնում են ջրի մէջ, որ ինչքան երկար պահէք, ծածկւում է այնքան հաստ կրային շերտով.

դրանց դորձ են ածում ծաղկանոցների ցանկապատի համար. կամ փոքրիկ կենդանիների փայտէ մօղէլներն են ձգում տաք ջրի մէջ, որ մի երկու օրից ստանում է քարացած կենդանի-ների կերպ և որ ծախում են այցելուների վրայ. տաք ջրից առաջացած այդ քարը, որ դարերի ընթացքում լեռներ է վաղմել՝ պիտանի է նմանապէս շինութիւնների համար:

Եղանակը Պետիգորսկում ոչ բոլորովին դաշտային և ոչ բոլորովին լեռնային է. շրջակայ սարերը և Կովկասեան գլխաւոր լեռնաշղթայի մօտաւորութիւնը տալիս են այստե-ղի եղանակին փոփոխականութիւն և խստութիւն. սակայն առ հասարակ այստեղի օդը վատառողջ չէ համարւում և ա-ւելի չորային է. ամառուայ վերջերը խիստ տօթ է լինում. քաղաքի վերի մասը լի է ծծմբային ջերմուկների անախորժ և ծանր հոտով. այս հանգամանքները վատ կարող են ազ-դել կրճաքաւ և կատարը ունեցողների վրայ:

Պետիգորսկում ամբողջ քաղաքի երկարութեամբ ընկած է ծառուղի կամ բուլւար, որի վերի մասը ջերմուկների լո-ղարանների առաջ աւելի ընդարձակ է և շքեղացւած է ծաղ-կանոցներով և փառաւոր մաքուր խմելի ջրի շատրուաննե-րով և աւազաններով. այդ տեղ կան ճաշարաններ, լրագրեր, գրքեր, ջրեր, Կովկասեան մտնր իրեղէններ և լուսանկար տե-սարաններ վաճառելու կիօսկներ, արեւի ժամացոյց և այլն: Փողոցները լայն, կանոնաւոր, տները մաքուր և շնորհքով շինած. գեղեցիկ տպաւորութիւն է անում քաղաքը. նրա առաջ բացւում է ընդարձակ և հիանալի տեսարան, որ վերջանում է հարաւում Կովկասեան լեռնաշղթայով, որի մի-ջից ուղղակի Պետիգորսկի դէմ արձանացած է Էլբրուսի սպիտակափառ, վիթխարի գագաթը: Տների թիւն է 1500, 15,000 մշտական բնակչով, որ ամառը համարեայ կրկնապատ-կւում է: Ժողովրդի մեծագոյն մասը ռուսներ են, բայց կան և լեռնականներ, գերմանացիք, հրէաներ և հայեր, որոնց մեծ մասը Նոր-Նախիջևանցի են. հայ գերտաստանների թի-

ւրն է Պետախիզորսկում 50, որոնք մշտակեաց են. ունին մեծ կալուածներ քաղաքի գլխաւոր փողոցների վրայ, պարապում են առևտրով, արհեստներով և առհասարակ բարեխաղով են մէջ են. ունին մի հոյակապ եկեղեցի, ընդարձակ բակով, երկուսն էլ միգրանտներու գաղութով և մի քահանայով:

Հրէաները պարապում են առևտրով և արհեստներով. նրանք ունին մի սինագոգա, որ շինուած է Աղէքսանդր երկրորդ վեհապետ կայսեր լիշատակին, որի համար և մի մշտնջենական կանթեղ է վառուում այնտեղ, որ անշիջանելի է սլաւոն:

Ռուս բանաստեղծ Լերմոնտովի լիշատակը մինչև հիմա դեռ վառ պահուած է Պետախիզորսկում. այդ տեղ ցոյց են տալիս այն տնակը, ուր նա ապրել է քառասնական թուականներին. տեղը, ուր նա սպանուել է մենամարտութեան ժամանակ. քաղաքը քաղաքի վերելում մի ժայժի մէջ, որ սիրում է եղել առանձնապէս բանաստեղծը և այլն: Քաղաքի կենտրոնում մեծ հրապարակի վրայ աւագ եկեղեցու հանդէպ մի բարձրագիւր ծաղկանոցում կանգնացրած է բանաստեղծի բրոնզեայ արձանը, բազմած ահագին վէճ. քաղաքում պատուանդանի վրայ:

Լերմոնտովի քարանձաւից երկու վերստ դէնը անտառի մէջ Մաշուտկա սարի մի կողմ վաղուց ներս է փլուել. ապառաժոտ սարը կողքից ծակել, շինել են կամարաւոր մի տուն, կորիզօրի կամ սրահի ձևով. այդ անցքով այցելուները գնում են դէպի փլուած տեղը, որը մի ահագին կլոր կամարաւոր վրանի ձև ունի՝ ամբողջը քարից, վերելից ահագին յերդիկաձև բացուածք ունի, որով լոյսը ներս է ընկնում. փլուածքի յատակում գտնուած է մի անդուդ, որ է կեղտոտ կանաչաւուն սուր հոտոյ ծծմբային ջրի ծովակ-ամբարը, որ չափազանց խոր է և շարունակ եռում է և պղպշակներով ջուր դուրս թորում. սա է համարուած Պետախիզորսկի ջերմուկների գլխաւոր բնական պահեստը կամ շտեմարանը. այս

փլուածքի (провалъ) արած տպաւորութիւնը այցելուի վրայ մեծ է: Փլուածքի մուտքի մօտ կայ թէյատուն. այդ տեղից կայ և մանուածապտոյտ ճանապարհ դէպի Մաշուտկա լեռան գագաթը, որտեղից ահագին հազուադիւտ տեսարան է բացուում դիտողի առաջ:

Քաղաքի վերելի մեծ հրապարակում արձանացած է ռուսաց խիստ մեծ, հաստահիմն, թանձրամարմին, գմբեթաւոր, հոյակապ աւագ եկեղեցին, որի ներսը նմանապէս շատ շքեղ զարդարուած է. այդ տեղ ամառը ամեն օր պատարագ է լինում. սրա զանգերից մինի քաշը 300 փութից աւել է:

Պետախիզորսկում կայ նմանապէս կաթոլիկների և բողոքականների եկեղեցի. ծխական և քաղաքային իգական և աւրական դպրոցներ և գիմնազիա:

Պետախիզորսկի յանգիման գտնուող Իւցա կլորաձև խոտաւետ սարից քաղաք է բերուած աղբիւրի մեծ, վճիռ, պատուական ջուր չուգունէ խողովակներով. ջուրը բարձրութիւնից գալով բնական կերպով առանց արհեստական միջոցների գնում է քաղաքի ամենալերի մասերը. այդ հանգամանքից օգտուելով քաղաքային վարչութիւնը բուլւարներում շինել է գեղեցիկ շատրուաններ, որոնցից մէկում ջուրը խփում է 15 սաժէնից վեր: Իւցայի աղբիւրները տալիս են օրական մի միլիոն դոյլ ընտիր ջուր:

Պետախիզորսկում կան կառավարչական և մասնաւոր հիւրատներ և կահաւորած սենեակներ ու ամեն գերտաստան ունի սենեակներ, որ վարձով տալիս է ամառը. մագազիններ, ճաշարաններ, հիւրանոցներ բացուած են միայն ամառը, տաւրուայ ինն — տասը ամիսը փակ մնալով. սակայն այդ երկու երեք ամսուայ ընթացքում նրանք այնքան են վերցնում, որքան ուրիշները այլ տեղ մի տարում: Տեղական հայերն ևս ունին սենեակներ իրենց տներում, որ վարձի են տալիս. այս տեղ մի փողոց կայ, որ կոչուած է Հայոց փողոց: Նոյն խիկ

արքունի բանկի մի բաժանմունքն է բացւում այս տեղ առնուալ երեք ամսուայ ընթացքում:

Պետտիգորսկում ջրերից օգտուել ցանկացողը պիտի ջրերի վարչութեան գրասենեակից վերցնէ գինը (3 ռ.) վճարելով սեզօնական տոմսակ, որով չորս վայրի հանքային ջրերումն էլ կարող է օգտուել անարգել՝ ներկայացնելով այդ տոմսը և վճարելով վաննայի գինը, որ է կէս ժամի համար 30 կոպէկ բնական ջրերից կազմած վաննայի համար և 50 կոպէկ արհեստական կերպով տաքցրած վաննայի համար. իսկ Կիսլովոգրսկի բնական Նարզանի ընդհանուր լողարանի տոմսակն արժէ 10 կոպէկ:

Շատերը հիւանդներից տեղ ժամանելով՝ աճապարում են իմանալ որն է ջրերում ամենտնշանաւոր բժիշկը՝ որ նրան դիմեն. սակայն պիտի նկատենք, որ այդ տեղ բժշկի համբաւը գոթախտաբար մեծ մասամբ կախուած չէ իսկապէս իր հմտութիւնից, այլ զանազան բժշկական գիտութեան հետ ոչինչ և ոչինչ կապ չունեցող պարագաներից... չուզենալով այս մասին երկարել հիւանդներին տարակուսանքի մէջ չընկնելու համար, դրականապէս վստահանում ենք խորհուրդ տալ, որ հիւանդը համարձակ կարող է՝ առանց հոչակին ուշադրութիւն դարձնելու, դիմել ամեն մի բժշկի, որը երեք կամ տւելի տարի է եղել Պետտիգորսկում և գիտէ ջրերի յատկութիւնը և այն հիւանդութիւնները, որոնք ապաքինւում են այդ ջրերով: Այո, դիմեցէք, համեստ, բեկլամի լեռնից չընկած, «հոչակ» չունեցող բժշկին. բաւական է որ ճիշտ որոշուած է ձեր հիւանդութիւնը. այդ է գլխաւորը. իսկ դրա համար կասկածելի դէպքերում կարելի է դիմել ջրերի վարչութեան բժշկական խորհրդին (վարձ 5 ռ. շաբաթն 3 անգամ). բժիշկ փոխելու ետեւէ մի ընկնէք, առանց մի յարգելի կամ անհրաժեշտ պատճառի. կան, այո, Պետտիգորսկում շահամուլ և խիղճը խեղտած բժիշկներ. զգուշ եղէք. դիմէք:

համեստներին. մի նայէք, որ դրանց յաջախորդների թիւը քիչ է. այդ ոչինչ չի նշանակում:

Շատ լաւ կրկին, որ առաջուց յայտնէք թէ ինչ կարող էք վճարել բժշկին և եթէ կարելի է ամբողջը կամ կէսը սկզբից վճարէք:

Առ հասարակ չորս խումբ ջրերումն էլ ճաշարանները շատ վատահամբաւ են, ոչ էժան են և կերակուրներն էլ վատաւոր չեն ճանաչուած. քանի որ այս մասին Վարչութիւնը դեռ ոչ մի ելք չէ գտած, ուստի մենք կարող ենք միայն առաջարկել, որ այցելուները կամ հիւանդները հնար եղած զգուշութիւնն ունենան:

Այս էլ ասենք, որ ամեն տեսակ պաշարեղէն Պետտիգորսկում առատ է և էժան. Կովկասեան գինիններն միայն թանգ են լինում, որ սակայն ներքի է, ի նկատի ունենալով ճանապարհների դժուարութիւնը և առևտուրի կարճ ժամանակեայ տևողութիւնը, կացարանների թանգութիւնը և այլն: Ուստի վատ չէ եթէ մէկն իր հետ տանէ գործ սծելու գինին. Պետտիգորսկում սեզօնի ժամանակ եկուորների դուարձութեան տեղերն են՝ պարտէզը, ուր ամեն օր առաւօտեան մի ժամ (7—8) և երեկոյեան երկու ժամ (6—8) նուազում է զինուորական երաժշտախումբը. Ներկայացումներ և կօնցերտներ կառավարչական հիւրանոցի դահլիճում. զբօսանք ոտով կամ ձիով դէպի Մաշուտկա սարի կատարը և նրա կողի փլուածքը (пропасть), դէպի Լեբմօնտովի քարայրը, Կարաս անունով մօտակայ գերմանական աւանը և այլն և այլն: Այս Կարաս գերմանական աւանը հիմնուել է 1802 թիւին. ունին օրինակելի գիւղատնտեսութիւն և նիստ ու կաց. բոլոր տները մաքուր, փողոցներն ուղիղ. ամեն տան առաջ պարտէզ. լաւ եկեղեցի, դպրոց. ապրուստն էժան. ամեն բան առատ և թարմ. կալ հիւրատուն. շատ լարմար և էժան:

Վարչութիւնը ունի այցելուների համար բաւարար գրատուն և ընթերցարան:

Անյիշատակ ժամանակներից իվեր ծծմբային ջերմուկներն հռչակած են որպէս սոսկալի սիֆիլիս ախտի ապաքինող: Ախէն քաղաքը դեռ ևս Կարլոս մեծի ժամանակ յայտնի էր լիշեալ հիւանդութեան բուժման մէջ: Այժմ այսքանը հաստատ է բժշկական գիտութեան մէջ, որ ծծմբային ջերմուկները կատարեալ հրաշալիքներ են գործում հին և թագնուած սիֆիլիսը (մինչև 30 տարուայ) երևան հանելու համար, որ զանազան ցաւագարութիւնների աղբիւր են լինում մարմնի մէջ: Ծծմբային ջերմուկներն անհրաժեշտ են սիֆիլիսը վերջնականապէս բուժելու համար, ծծմբային ջերմուկները առաջնակարգ նշանակութիւն ունին բեւատիղմ և կաշու հիւանդութիւններն բժշկելու համար:

Այս հանգամանքն է պատճառ, որ Պետտիգորսկը իր ծրծրմբային ջերմուկներով ստացել է համաշխարհային հռչակ, ամառը պետութեան ամեն ծայրերից և արտասահմանից հիւանդներ են գիմում այստեղ, որոնց բժշկութեամբ պարապելու համար գտնւում են այդ ժամանակ մօտ երկու հարիւր եկւոր բժիշկներ:

Պետտիգորսկում բժշկուելու սեզօնը սկսւում է մայիսի 1-ին և վերջանում է սեպտեմբերի 15-ին:

Պետտեգորսկում ծախւում են և բժշկի նշանակածին համեմատ խմում են Եսենտուկի ջրերը, Նարզան, կումիս և կեֆիր:



Ե.

ԺԵԼԵԶՆՕՎՕՊՈՒՍԿ



Էպի հիւսիս-արեւմուտք՝ Պետտիգորսկից 12 վերստ՝ Երկաթասարի խիտ անտառապատ լանջին գտնւում է Ժելեզնօվօսկ. գեղեցկագիր, ընտիր զբօսատեղի: Երկաթջրի 20 աղբիւր ունի 12-ից մինչև 42 աստիճան տաքութեան. այս ջրերից օգտւում են գլխաւորապէս կանայք և առհասարակ սակաւարիւնութիւնից տանջուողները. երկաթջուրը խմում են և լողանում նրանում: Ժելեզնօվօսկը կարող է և ինչպէս ամառանոց ծառայել. նրա բարձրութիւնն է 2070 ոտնաչափ. իսկ ինքը Երկաթասարն ունի 3000 ոտնաչափ բարձրութիւն: Բժշկուելու սեզօնն այստեղ սկսւում է յուլիսի 1-ից մինչև 1 սեպտեմբերի: Կան ամեն յարմարութիւններ, ինչպէս որ միւս ջրերում:



ածխաթթուային նատր, բրօմ, եօդ, որոնցից ամենանշանա-
ւորն է իր բուժիչ ազդեցութեամբ № 17 ակը, ասլա № 18
և № 4:

Այս ջրերն աւելի ներքին գործածութեան՝ խմելու են
ծառայում. համով անախորժ չեն, այլ և դուրեկան. այս ջրե-
րն ահագին օգնութիւն են անում մարտկոցութեան թուլու-
թեան, ստամոքսի և միզափամփուշտի կատարրին և այլ նը-
մանօրինակ տկարութիւններին:

Եսենտուկի ջրերը, բժշկի նշանակելով թարմ, նոր ածածը
կարելի է բերել տալ և օգտուել նրանցից, ուր ցանկանաք, ա-
ռանց Եսենտուկի գնալու, որ շատ ծախսերի և անյարմարու-
թիւնների հետ կապուած է:



2

Ե Ս Ե Ն Տ Ո Ւ Կ.



Տոփկասեան հանքային ջրերի շրջանում՝ Պեա-
տիգօրսկի ջերմուկներից յետոյ՝ նշանաւոր
տեղն են բռնում Եսենտուկի հանքային
ջրերը, որոնց անշուշտ լաւ ապագայ է
սպասում և աւելի մեծ հռչակ: Եսենտու-
կըն մեծ ռուսաբնակ աւան է դաշտի վրայ
Պօդկուժուկ գետի ափին: Պեատիգօրսկից

15 վերստ է մինչև Եսենտուկ. այստեղ տների պա-
կասութիւն չը կայ. տեղը մի քիչ տենդային է. մա-
նաւանդ գարնան վերջերը. սրա միջովն է ճանապարհ գնում
դէպի Կիսլովօդսկ. այստեղի հանքային աղբիւրների շուրջը
ձգուած են ընդարձակ ծառաստաններ. ամեն աղբիւր նշա-
նակուած է թուահամարով և վրան ունի գեղեցիկ պաւիլիօն.
ուղղակի աղբիւրից ջրի խմելը ձրի է. իսկ Պեատիգօրսկի, Կիս-
լովօդսկ և Ժելեզնօվօդսկ Եսենտուկեան հանքային ջրերի շի-
շը ծախուում է 10 կոպէկ: Եսենտուկի ջրերը շիշերով վա-
ճառուում են ամբողջ կայսերութեան բոլոր գեղատներում,
նոյնպէս Եսենտուկեան ջրերից ստացուած աղերը:

Եսենտուկի ջրերի գլխաւոր բաղադրական մասերն են

Է.

ԿԻՍԼՕՎՕԴՍԿ



Եւ այն Հիւանալի վայրն է, ուր Համա-
խըմբում են Հիւանդները միւս երեք
ջրերում բուժուելուց լետոյ. ջերմուկնե-
րը, երկաթաջրերը, աղնատրայինները իրենց
ուժեղ ներգործութեամբ ախտահանելով
Հիւանդին, թուլացնում. նուազեցնում են
նրան. ուստի Հիւանդները դիմում են սեզօնի վերջում գէ-
պի Կիսլովոզսկ կազդուրելու և ամրապնդելու իրենց օրգա-
նիզմը:

Կիսլովոզսկը 20 վերստ գէպի Հարաւ է Եսենտուկից. տեղն
է լեռնոտ, որոնք արօտատեղեր են. Կիսլովոզսկի տեղը 3000
ոտնաչափից աւել է. բուն Կիսլովոզսկը մի ձորի մէջ է, որի
միջով անցնում է Օլխովկա գետակը. ձորը բռնուած է սքան-
չելի ծառաստանով, ալբ տեղ կան լորջի բուրալից ծառերի
ամբողջ ալէեաներ: Այստեղ կան Հոյակապ ամարանոցներ և
Հիւրանոցներ. աւելի էժանագին սենեակներ կարելի է վար-
ձել գիւղում, որ ձորից դուրս է:


Այստեղի բժշկական սեզօնը սկսում է լունիսի 1-ին և
տևում է մինչև սեպտեմբերի 15. սակայն շատերը մնում են
մինչև նոյեմբեր. վասն զի աշունը այստեղ լինում է շատ
պայծառ և դիւթիչ.

Կիսլովոզսկը առաջնակարգ ամարանոց է. այստեղ գալիս
են կրծքով տկար և ջղալին թուլութիւն և խանգարմունք
ունեցողները: Յուլիսին և Օգոստոսին ահագին բազմութիւն
է խմբում այստեղ. ժամանակը շատ ուրախ և բերկրալից է
անցնում, կան շատ զբօսատեղեր, որոնցից գլխաւորն է Բեր-
մամուտի բարձրութիւնների վրայ գնալը՝ 40 վերստ. Բեր-
մամուտի վրայից բացւում է մի ահագնատեսիլ անդունդ—ձոր,
որի միւս կողմը արձանացած է վիթխարի Ելբրուսը, որն այդ
տեղ երևում է Հիմքից մինչև երկնածրար գագաթը. այցե-
լուները սիրում են մանաւանդ արշալուսին դիտել Հսկայ լե-
ռը, երբ արեգակի ճառագայթները լուսաւորում են Ելբրու-
սի գագաթը, այն ինչ դեռ ձորերում և ստորոտում տիրում
է աղօտ մթութիւն: Ելբրուսի բարձրութիւնն է 18,525 ոտ-
նաչափ:

Կիսլովոզսկի միակ և հուշակաւոր հանքային ջուրն է
Նարզանը, որ վճիտ պաղ (11 աստիճան) ջուր է, առատ ած-
խածութեւ գաղով և օրական դուրս է բղրում 200,000 գոյլ
ջուր. Նարզանի ջրով վաննա ընդունողը զգալի կերպով կարճ
միջոցում ամրապնդում է իր տկար կազմուածքը և ջղալին
թուլացած սխտեմը:

Միանգամից տկարները չեն կարող լողանալ իսկական
Նարզանի աւազանում. նրանք նախ ընդունում են տաքցրած
վաննա. օրական մի աստիճան սլաղեցնելով վաննան, շատ քի-
չերը կարողանում են բուն Նարզանի մէջ լողանալ:

Նարզանը խիստ գուրեկան համ ունի և տկարները և
առողջներն ամբողջ օրը խմում են անարգել:



Ը.

Թ Ի Փ Լ Ի Ս



Թիֆլիսը գտնւում է $41^{\circ}41'$ Հիւս. լայն և $62^{\circ}27'$ արևել. երկայն. վրա 1,350 ոտնաչափ բարձր ծովի մակերևոյթից. նա Կովկասի առաջին բազմամարդ քաղաքն է, նրա մտաւոր և կառավարչական կետ-րոնավայրը. Թիֆլիսը Կովկասի մայրաքաղաքն է:

«Թիֆլիս» վրացի բառ է և նշանա-կում է տաք ջուր, այդ անունն նա ստացել է իր մէջ եղած ծծմբային ջերմուկների պատճառով: Բաղաքը ընկած է Կուր գետի երկու ափին Ս. Դաւիթ (2400 ոտ) և Մախաթ (2118 ոտ) սարերի զառիվայր լանջերի վրայ մի նեղ և ծառերից զուրկ ձորափորում. միայն քաքաքի ներքին և վերին մասե-րում Կուր գետի ափերում կան շատ այգիներ և պարտեզներ:

Թիֆլիսի հիմնարկութիւնը հաւանականօրէն պարսիկնե-րին է պատկանում, որոնք այստեղ Կուր գետի նեղ կիրճի, որ Վրաստանի մուտքն է համարւում, սեպացած ժայռերի

վրայ ամրոցներ շինեցին չորրորդ դարում. սակայն դժուար է ենթադրել, որ այս քաղաքի հիմնադրութիւնը գուցէ աւելի հին լինի, վասն զի անկարելի է, որ Վրաստանի իշխանաւոր-ները ուշադրութիւն չըդարձնէին այդպիսի մի կարեւոր դիրք ունեցող կէտի վրայ: Ուրիշ պատմական վկայութեամբ նա հիմնուել է 469 թուին վրաց արքայ Վախտանգ Գորգասա-նի ձեռքով: Բազրատիոն հարստութեան վրաց թագաւորները Թիֆլիսի ռազմագիտան կարեւորութիւնը գնահատելով իրենց մայրաքաղաքը փոխադրեցին Մցխեթից Թիֆլիս: 1500 ամեայ իր գոյութեան ընթացքում Թիֆլիսը 21 անգամ ենթակայ է եղել ասիական խառնիճաղանճ ազգերի ասպատակութեան և աւերման, որոնցից նշանաւորն էր և վերջինը 1795 թուին սեպտեմբերի 12 Աղա Մահմատ անգուլթ շահի աշխարհաւեր արշաւանքը, երբ ժողովրդի մեծ մասը ջարդուեց, 3000 մա-տաղատի հոգի գերի տարուեցաւ և քաղաքը փլատակների մի կոյտ դարձաւ. այդ վիճակի մէջ քաղաքն անցաւ ռուսաց տի-րապետութեան տակ և շէն դարձաւ ու հասաւ այժմեան զար-գացման աստիճանին:

Թիֆլիսը ի հնուց անտի յայտնի է որպէս առաւելապէս հայաբնակ քաղաք. եւրոպացի մի քանի ճանապարհորդներ, որոնք եղել են Թիֆլիսում անցեալ դարում (1701, 1772, 1780 թ.) գրում են, թէ այդ ժամանակ քաղաքի բնակիչ-ների թիւն էր 20,000, որից կէսից աւելին՝ այն է 14,000-ը հայեր էին. հայերն ունէին ութ եկեղեցի, վրացիք վեց:

Թիֆլիսն նշանաւոր է իր ծծմբային հանքային ջերմուկ-ներով, որոնց տաքութիւնը հասնում է մինչև 37 աստիճա-նի. սակայն այդ ջերմուկները մասնաւորների սեպհականու-թիւն լինելով պէտք եղած պիտանաւորութեան և կատա-րելագոյն բարեկարգութեան հասած չեն և որ և է խնամք չէ տարւում նրանց տկերի պահպանութեան կամ առաւել զարգացման վրայ:

Թիֆլիսն օգի կողմից առողջ տեղ է համարւում. ձմե-

ուր մեղմ է, աշունն ամբողջ զրեթէ միօրինակ պաշառ է
անցնում. ամառը լաւ շոգ է լինում. սակայն ջերմութենդ
չըկայ այստեղ. օդի տարեկան միջին բարեխառնութիւնն է
13 աստիճան:



Ա Ղ Բ Ի Խ Ր Ն Ե Ր

Ուղեցոյցներ՝ Վէյդենբուրգի և Ստարոփլի. Նկարագիրներ
բժ. Յովհաննիսեանի, Անանեանի և Բօգոսլովսկու:

02
03
51
06
08
10
20
51
11

1080 25000

1) Զգուշացում
2) Զգուշացում
3) Զգուշացում
4) Զգուշացում
5) Զգուշացում
6) Զգուշացում
7) Զգուշացում
8) Զգուշացում
9) Զգուշացում
10) Զգուշացում
11) Զգուշացում
12) Զգուշացում

1080 25000

35

ԼՈՅՍ ՏԵՍԱԾ՝

1) Զորս մանրավել	.	.	.	.	20 կող.
2) Քնար Խօսնակ	.	.	.	.	50 »
3) Երկու մանրավել	.	.	.	.	15 »
4) Փայտաշեն խրճիթ	.	.	.	.	60 »
5) Տեղագրական նամականի	.	.	.	.	30 »
6) Կաթնատնտեսութիւն	.	.	.	.	10 »
7) Կոլումբոս	.	.	.	.	20 »
8) Նրա մայրը	.	.	.	.	15 »
9) Եւանգելիս	.	.	.	.	10 »
10) Վերածնութեան դար	.	.	.	1 բուք.	— »
11) Ուղեորութիւն Զերնօգորիայում	.	.	.	.	10 »
12) Կովկասեան Հանքային ջրեր	.	.	.	.	10 »

Ծախում է բացառապէս Թիֆլիս «Կենտրոնական
գրավաճառանոցում»:

Գինն է 10 կող.

5766

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0068732

